Գեղանիստ

Վարչական ղեկավար՝ Արտավազդ Ավետիսյան

Հեռ: 098 09 12 69

Մակերես՝ 1280կմ^2

Բնակչություն՝ 1250

Ինդեքս՝ 3010

yeritsyan1979@mail.ru

Գեղանիստը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկի համայնքի վարչական շրջան է, գտնվում է Արթիկից՝ 10,8 կմ հեռավորության վրա է, իսկ Գյումրուց՝ 19 կմ հարավ-արևելք: Մինչ 1948 թվականը կոչվել է Կոլկաթ: Բնակչությունը՝ 1339 մարդ: Նախնիները 1828-1829 թթ.-ին և 1918 թ.-ին գաղթել են Մուշից, Խնուսից, Ալաշկերտի գավառի Բաղնոց ու Վերին Բասենի շրջանի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և հացահատիկի մշակությամբ: Գեղանիստն ունի 1711 թ. «Ժամ» և 1852 թ. մեկ այլ եկեղեցի, «Հմայիլ», «Իրիցտան Ավետարան», «Բավոյի սուրբ» և Գրիգոր Նարեկացի մատուռներ:

Գեղանիստը գտնվում է Արագած լեռան ստորոտում՝ ծովի մակարդակից 1850մ բարձրության վրա;

Տարվա եղանակների բաշխվածությունը անհամաչափ է, ձմռան տևողությունը մոտ 6 ամիս է; համայնքի տարածքը գտնվում է լեռնատափաստանային ենթագոտում, տարածքի ռելիեֆը հիմնականում լեռնային է, կտրտված ձորակների լայն ցանցով:

Համայնքը աչքի չի ընկնում հարուստ բնությամբ, հիմնականում տափաստանային է: Շրջակա միջավայրի պահպանության համար համայնքի միջոցներով կառուցվել է աղբի կուտակման վայրեր:

Համայնքը հարուստ չէ մշակութային օջախներով, սակայն համայնքի տարածքում կան բազմաթիվ և հազվագյուտ պատմամշակութային նշանակություն ունեցող մատուռներ, գերեզմանոցներ(1830-ական թվականների) և 1 եկեղեցի՝ կառուցված 1908թվականին: Վերջինս 2011 թվականին վերանորոգվել և պարսպապատվել է համայնքի բնակիչ՝ բարերար Բաբկեն Մարտիրոսյանի միջոցներով: Վերջինիս հովանավորությամբ կառուցվել է Հայրենական և Արցախյան պատերազմներում զոհվածների հիշատակին նվիրված հուշահամալիր: